Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 402 - Ա որոշման

«Սոցիալական ձեռնարկատիրության և մասնագիտական ուսուցման կենտրոնի ստեղծում»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակը սոցիալական ձեռնարկատիրության և մասնագիտական ուսուցման մոդելային կենտրոնի ստեղծումն է՝ հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես երիտասարդներին և կանանց ոլորտային գիտելիքներ փոխանցելու և նրանց զբաղվածությանն օժանդակելու համար: Ծրագրի նպատակն է աջակցել այն ֆիզիկական անձանց (հաշմանդամներին, գործազուրկներին, խոցելի խմբերի ներկայացուցիչներին), որոնք չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց նյութական և հոգևոր պահանջները: Ծրագիրը կենտրոնանալու է հաշմանդամություն ունեցող անձանց կրթություն տալու վրա՝ վերջիններիս համար աշխատաշուկայում ինտեգրվելու հնարավորություն և նոր աշխատատեղեր ստեղծելով: Ծրագրի իրականացման առաջին տարվա ընթացքում խոցելի խմբերի 270-360 ներկայացուցիչներ անցնելու են վերապատրաստում այնպիսի թեմաներով, ինչպիսիք են «Սոցիալական ձեռնակատիրություն», «Ստարտափ գաղափարի զարգացում» , «Բիզնես մոդելի մշակում» և այլն: 4-ամսյա վերապատրաստումներից հետո ծրագրի շահառուները հնարավորություն են ստանալու նաև 2-ամսյա խորհրդատվություններ ստանալու ոլորտի փորձագետներից: Վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքները շահառուները հնարավորություն կունենան կիրառելու պրակտիկայում՝ հնարավորություն ստանալով ինտեգրվելու աշխատաշուկայում: Այսպիսով՝ ծրագրի նպատակն է նաև աշխատատեղերի ստեղծման և գործազուրկների վերապատրաստման ճանապարհով աջակցել սոցիալական օգնության կարիք ունեցող գործազուրկներին՝ աշխատանքի տեղավորման հարցում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Հայաստանի համայնքների միությունը նախատեսում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայաստանում Ճապոնիայի դեսպանություն

		ք. Երևան, Բաբայան 23/4
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի համայնքների միություն» ՀԿ Հասցե՝ ՀՀ, Ք. Երևան, Բարեկամության 1 ՀՎՀՀ՝ 03534085
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ ՀՀ Տավուշի մարզ, Դիլիջան համայնք Բնագավառը՝ սոցիալական:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն՝ 24,142,710 դրամ: Ֆինանսական միջոցները ստացվել են 2021 թ. մարտի 29-ին: • Շինարարական աշխատանքների իրականացում՝ 23,642,710 դրամ (2021 թ. երկրորդ-երրորդ եռամսյակներ) • Ծրագրի աուդիտի իրականացում՝ 500,000 դրամ (2022 թ. երկրորդ եռամսյակ)
7.	Բարեգործություն ստացողը	Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում խոցելի խմբերի ներկայացուցիչներ՝ ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալների:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	15 մայիսի 2021 թ. - 18 մարտի 2022 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Վերապատրաստման կենտրոնի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 23,642,710 դրամ (1 հունիսի – 15 սեպտեմբերի, 2021 թ.) 2. Աուդիտորական ծառայությունների ստացում՝ 500,000 դրամ (19 մարտի 2022 թ. - 19 ապրիլի 2022 թ.)
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Շինարարական աշխատանքներ 1.1. Համաշինարարական աշխատանքների իրականացում՝ 21,926,610 դրամ 1.2. Էլեկտրական լուսավորության անցկացում՝ 979.450 դրամ 1.3. Ձրագծի ներքին տեղամասի անցկացում՝ 736.650 դրամ 2. Աուդիտորական ծառայությունների ստացում՝ 500,000 դրամ

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակեր-պական ծախսերը	Ծրագրի աուդիտի իրականացում՝ 500,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	«Սոցիալական ձեռնարկատիրության և մասնագիտական ուսուցման կենտրոնի ստեղծում» ծրագրի գործընկերներն են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ Տավուշի մարզպե-տարանը, Դիլիջանի համայնքապետարանը: Ծրագրի գործընկեր կազմակերպություններ են հանդիսանում նաև «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հ/կ-ն, Հայաստանի սոցիալական ձեռնարկությունների ասոցիացիան, «Միջմշակութային հետազոտությունների, ուսուցման և երկխոսության միջազգային կենտրոն» հ/կ-ն, ԵՊՀ ձեռներեցության զարգացման կենտրոնը:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման անմիջական վերահսկողություն իրականացվելու է «Հայաստանի համայնք-ների միություն» ՀԿ-ի խորհրդի, վարչության ու վերստուգիչ հանձնաժողովի կողմից: Ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվելու է ծրագրի ղեկավար կոմիտե, որի կազմում ընդգրկվելու են մեկական ներկայացուցիչ գործընկեր բոլոր կառույցներից և կազմակերպություններից, որի անմիջական վերահսկողության ներքո իրականացվելու է ծրագիրը: Ամենամսյա ֆինանսական ու ծրագրային հաշվետվություններ են ներկայացվելու դոնորին՝ ՀՀ-ում Ճապոնյայի դեսպանությանը: Հոգաբարձուների խորհուրդն ունենալու է ծրագրի արդյունավետության վերահսկման գործառույթ: Ծրագրի շրջանակներում իրականացվելու է արտաքին աուդիտ: Ծրագրի արդյունավետության վերահսկման գործընթացում կիրառվելու են գնահատման (կարճա-ժամկետ, երկարաժամկետ), մշտադիտարկման, հաշվետվությունների ներկայացման մեխանիզմներ ՀՀ Կառավարության 2003 թ-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

14.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ